# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/29 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի մայիսի 16-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-8 ծածկագրով պայմանագրում 2025 թվականի հունիսի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «Շող Ար» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2025 թվականի հունիսի 13-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ապրանքի դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2025 թվականի հունիսի 13-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2025 թվականի մայիսի 16-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-8 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**